

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խորագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Redaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ածն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր ըստ ին 2 կոպեկի:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷՆԻ

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մի շարք խնդիրներ.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Օրինակ վերցրէք. Բարձրագոյն երկրագործական
դպրոցի հարցը. Նամակ Ստալինոպոլից. Նամակ
Ալեքսանդրոպոլից. Նամակ Խոնապոլիսից. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քաղա-
քական դատ. Ամուսնական վիճակագիր. Արտա-
քին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՄԱ.—ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քանական հա-
յեացք:

ՄԻ ՇԱԲԱԹ ԽՆԻՐՆԵՐ

Կան կենսական խնդիրներ, որոնք յա-
ճախ գանձադան հանգամանքների շնորհիւ
երկար ժամանակ մնում են լուրջութան մէջ
և ապա, երբ մի մասնաւոր դէպք, մի պա-
տահական հանգամանք նրանց հրապարակ
է հանում, նրանք առաջ են դալիս իրանց
բոլոր ոյժով, իրանց կենսական մեծ նշա-
նակութեամբ:

Սյուպիսի խնդիրներից մէկն էր, օրինակ,
քաջ անաչապական խնդիրը, որ վաղուց
մեծ հոգածութեան առարկայ էր դարձել
այն բոլոր անձանց համար, որոնք ըմբռ-
նում էին քաջանայի մեծ նշանակութիւնը
ժողովրդական կեանքի մէջ: Նա յարուցել
է այժմ և գրաւել մեր բոլորի ուշադրու-
թիւնը:

Բայց կան նոյնպէս անհրաժեշտ ու-
թիւն դարձած բազմաթիւ խնդիր-
ներ, որոնք սակայն այսօր հերթական
քննութեան առարկաներ չեն կազմում, բայց
որոնք պահանջում են ամենախորին ուշա-
դրութիւն, ուսումնասիրութիւն ըստ կա-
րելոյն, և դրա հետ միասին շուտաւրեւ
լուծում:

Քաջանայական խնդիրը շոշափում է
այժմ նրա բարդական կրթական պատրաս-
տութեան տեսակետից. բայց նա ունի և
մի ուրիշ կարեւոր կողմ, այն է՝ քաջանա-

նեւի նիւթական վիճակը, նրանց ա-
պահովութեան եղանակը և ձեւը: Մեր
գիւղերում տեղի են ունենում բազմաթիւ
սակ վեճեր և կռիւներ՝ քաջանաներին
հող յատկացնելու, հասոյթներ հասցնելու
մասին: Մեր քաղաքներում այս կամ այն
քաջանային հասնելը զուգարի խնդիրը
յաճախ մեծ երկպառակութիւնների և ի-
րարանցումների պատճառ է դառնում: Ա-
հա մի գործ, որն արժանի է մանրամասն
ուսումնասիրութեան:

Շարունակելը մեր խօսքը:

Մեր եկեղեցական կալուածքներն
ընդհանրապէս վաղուց կարօտ է մի առանձին
հոգատարութեան: Կալուածքների տեղա-
կան կառավարութիւնը, նրանց տնտեսու-
թեան կարգաւորումը, հասոյթների մաս-
նաման հաշիւներ և ցուցակներ կազմելը,
բոլոր կալուածքների վրա ընդհանուր հսկո-
ւթիւնը և նրանց կառավարելու ձեւի
բարեփոխութիւնը, ահա մի ուրիշ կարեւոր
խնդիր:

Մեր ծխական համայնքի, թեմական իշ-
խանութեան և եկեղեցական երաբխայի
իրաւաւորութեան սահմանները
ձեռնարկ օրոշումը վաղուց կարօտ է ա-
մենաշուրջ քննութեան և ձեւակերպութեան:
Իրաւունքների իմաստը մնում է այն, ինչ
կայ, բայց նրանց ծաւալը, սահմանը պէտք
է որոշվի բացայայտ կերպով:

Եկեղեցական և ծխական վարչական այժ-
ման գործադրութեան ընթացքի շնորհիւ
կիտվելը զիջվել են գործնական լուծ-
ման կարօտ մի շարք խնդիրներ, որոնք
քննական ուսումնասիրութեան և գնահա-
տութեան են սպասում:

Ամուսնական կանոնների գործադրու-
թեան մէջ տեղի ունեն հակասական երե-
ւոյթներ, որոնք կարօտ են վերաքննութեան:
Որպէս զի վաղեքի միաբանական
կեանքը բարեփոխվի և միաբանական գործու-

նէութիւնը օգտակար ընթացք ստանայ,
հարկաւոր է, որ միաբանական կանոնադրու-
թիւն մշակվի, որպէս զի կարելի լինի բա-
րոյական ու մտաւոր նպատակներին ծա-
ռայելուն վաղեքի գործունէութիւնը:

Մեր թեմական դպրոցների բարեկար-
գումը, մասնագիտական առարկաների կա-
նոնաւոր աւանդումը, նրանց պրոգրամի-
նի որոշ սահմանումը, — ահա քանի տարի
է սպասում են իրանց իրագործութեան:
Աւսումնական յանձնաժողովի գործունէու-
թիւնը կարօտ է որոշ ճիշդի, որից
յետոյ կարող է սկսվել նրա կանոնաւոր
աղբիւրթիւնը մեր ուսումնարանական կեան-
քի վրա:

Նոյն իսկ գանադան հարցեր քննելու
ճիշդիւնը, կանոններ մշակելու գործը
պահանջում են, որ մի կանոնաւոր եղանակ,
մի պարտաւորեցուցիչ ձեւ սահմանվի, որ-
պէս զի կարեւոր գործերի վերջնական լու-
ծում առանց կարկած չը լինի պատե-
հականութիւնից և այնպիսի սխալներից,
որոնք տեղի չեն ունենայ, եթէ նա նախա-
պէս անցած լինէր քննարկատեղութեան բոլոր
շրջանները:

Այս և սրանց նման խնդիրներ եթէ մի
որ և է պատճառով հրապարակական կա-
նոնաւոր քննութեան առարկայ չեն դառ-
նում, — դա դեռ չէ նշանակում, թէ նրանք չը
կան և նրանց կարեւորութիւնը չէ զգա-
վում կեանքի մէջ: Նրանք կան և սպա-
սում են իրանց լուծման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՆԱԿ ՎԵՐՅՈՒՐ

Նորիս մեր լրագրի մէջ հաղորդված էր, որ
Մոսկուայի հայոց եկեղեցու քահանայ հրաժարվել
կարող կաթողիկոսական կոնգրակը՝ այն պատճա-

թիւնով, Նախագիծը զրանում է առաջնորդին այդ
միջոցը, ուրեմն առաջնորդի կողմից հաստատել
աւելի պարտաւորութիւն է, քան թէ իրաւունք:

Մեր կարծիքով, նախնական ցուցակները պէտք
է կազմեն և առաջարկեն եկեղեցու քահանայները,
նախապէս յայտարարելով այդ մասին ի գիտու-
թիւն ժողովրդի: Քահանայների ցուցակներից
նրանք միասին կազմում են մի ընդհանուր ցու-
ցակ եկեղեցու բոլոր ծխականներին, վերածելով
նրանց աղագոհները այդուրեւական կարգին, և
զննում են եկեղեցու, յայտարարելով, որ ամեն ոք
մի ամսվայ ընթացքում իրաւունք ունի զննել
ցուցակը և նշանակել նրա վրա կամ առանձին
իր նկատողութիւնները ցուցակի թերութիւնների
մասին: Ամիսը անցնելուց յետոյ քահանայները ա-
ռաջարկում են ցուցակը առաջնորդին, տալով ի-
րանց բացատրութիւնը եղած նկատողութիւնների
մասին: Ահա այդ ցուցակն է, որ պէտք է հա-
տառէ առաջնորդը, քննելով և ուշադրութեան
առնելով նկատողութիւնները: Այսպէս անկարե-
ւի է. հակառակ դէպքում ծովը չէ կարող իմա-
նալ, թէ ինչպէս է վարվել քահանայ նրա անուան
և իրաւունքի հետ:

Յօդ. 6. Ոչ կարեն ընտրող և ընտրելի լինել
այնպիսի, որը.
ա) Գտնանին ընդ եկեղեցական ապաշխարու-
թեամբ, սահմանելով ի կողմանէ հոգևոր իշխա-
նութեան:

Եթէ այդ այն ապաշխարութիւնն է, որ սահ-
մանում է քահանայ խոստովանութեան ժամա-
նակ, միանգամայն անտեղի է յիշել այդ ժամա-
նակ մասնաւոր հրապարակ հանել այն, ինչ որ է և
պէտք է մնալ դադարել խոստովանողի և ապաշ-
խարողի մէջ և որը երբէք չէ կարող սահմանա-
փակել քաղաքացիական իրաւունքը, ուստի հա-
կաւոր է այդ կէտը բողոքով ջնջել:

բ) Գտնանին ընդ քրեական դատաստանաւ:

առվ, որ այդ կօնգրակը գրված էր աշխար-
հաբար լեզուով, և ոչ գրաբար:

Կա մի այնպիսի տարօրինակ դէպք է, մի այնպի-
սի անսահման յանդուրժեմ մի քահանայի կող-
մից, որ նոյն իսկ մարդ զօտարանում է հաւա-
տալ, թէ կարող է այդպիսի մի բան պատահել:
Սակայն քանի որ, ինչպէս մեզ հաղորդում են,
մի քանի ուրիշ հոգևորականներ էլ նոյն կարծիքն
են յայտնել, քանի որ ուրիշ հոգևոր պաշտօնեա-
ներ էլ դեռ շարունակում են գրաբար չըմբռ-
նականներ հրատարակել, գրաբար լեզուով զի-
մունքի անել ժողովրդին, և գրաբար հրահանգ-
ներ ու կանոններ հրատարակել, ուստի մենք
ստիպված ենք խոստովանել, որ այդ երեւոյթը
տեղի ունի, և դրա հետ միասին ստիպված ենք
կրկնել այդեւական տարրական այն ճշմարտու-
թիւնը, — թէ պէտք է գրել այն լեզուով, ինչ լե-
զուով ժողովուրդն է հասկանում:

Տալիս խնդրի տէր, համարձակ մտածելու ան-
ընդունակ մարդիկ, ճշմարիտ է, խօսքով խոստո-
վանում են, որ մեր գրաբար լեզուն կօրցրել է
իր քաղաքացիական իրաւունքը ժամանակակից
հայոց կեանքի մէջ, բայց այդ խոստովանութեան
հետ միասին անընդունակ են ձեռք վերցնել բու-
տիկայից և գրել աշխարհաբար, հասկանալի, ժո-
ղովրդին մատչելի լեզուով:

Շրջաբերականներ են հրատարակում, կանոններ
տպագրում, ժողովրդին թղթեր են գրում, վեր-
ջապէս հասարակական հիմնարկութիւնների հետ
գրաւոր յարաբերութիւնների մէջ են մտնում, և
միշտ գրաբար լեզուով, այն լեզուով, որ յաճախ
իրանք գործնելը չեն հասկանում (զերեւ ատենա-
դպիւնների գործն է), և այդ բաւական չէ. շատ
անգամ այնպիսի խրթին գրաբար են գրում, որ
միայն ծիծաղ են յարուցանում:

Այո, ճշմարիտ է, անընդունակ, փոքրիկ խնդրի
տէր մարդիկ չեն կարող երբէք իրանց կեանքում
մի համարձակ քայլ անել, մի նորութիւն մտնել,

Այդ կէտը կարող է մնալ, եթէ միայն աւելացվի
ամեղադրելով այնպիսի յանցանքների մէջ, որոնց
հետևանքը կարող է լինել զրկումն ամեն իրա-
ւունքներից:

Կան հազար ու մէկ դէպքեր, որոնց ա-
ռիթմով կարելի է լինել ընդ քրեական դատաս-
տանաւ, բայց որոնք չունեն ոչինչ առնչութիւն
պատուի և բարոյականութեան հետ: Այդ տեսակ
յանցանքները ոչ մի տեղ և ոչ երեւէ չեն զըր-
կում քաղաքացիական իրաւունքից: Սակայն ա-
ռաջին դէպքում ևս հարկաւոր է առանձնապէս
քննել լրջօրէն, թէ կարող է արդեօք որ և է մէկը
զրկվել քաղաքացիական իրաւունքից հոգևոր իշ-
խանութեան ձեռքով: Շատ կասկածելի է:

Յօդ. 8. Նրաւական քահանայք արձանագրեն...
և և զաղտու լինելն յեկեղեցական և ի դատաս-
տանական պատժոց և ի տուգանաց:

Քահանայն ոչ մի միջոց չունի ժողովուրդ և
ստուգելու այդ տեղեկութիւնները, որոնք ինքն
ըստ ինքեան ոչինչ նշանակութիւն էլ չունեն,
ինչպէս բացատրելիք նախընթաց յօդուածում:

Յօդ. 11. Ի ցուցակ ընտրուց մարթ է մուծա-
նել (ուրեմն մարթ է և ոչ մուծանել) զայնպիսիս
և կթ ի նորեկ ծխականաց, որը զէթ դամս և-
րիս եղևալ են ծախ միոյ եկեղեցւոյ:

Նորեկը կամ եկեղեցու ծովն է, կամ ոչ: Ա-
ռաջին դէպքում պատճառ չը կայ զրկել նրան ի-
րաւունքից, իսկ երկրորդ դէպքում հարկ չը կայ
յիշել նրա մասին: Առհասարակ իրաւունքից
զրկելը կարելի չէ կարկած, այլ պէտք է հիմն-
ված լինի ծանրախիւռ պատճառների վրա: Մեր
կարծիքով սխալ է, որ նախագիծը վաղը ինչ թեթեւ
կերպով է նայում իրաւունքներ խախտելու վրա:

Յօդ. 13. Եթէ ծխական տեղափոխին ըստ տը-
նօրէնութեան հոգևոր իշխանութեան, այլ ոչ ըստ
խնդրանաց իւրեանց, յայն դէպս նոքա մուծանին
անյապաղ ի ցուցակ և վայելեն զնախկին իրա-
ւունքն ընտրուցաց:

Ս. Վ. ԱՐԴՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ

Типографія Канцел. Главннач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 445.